ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Shamshyan.com լրատվական կայքի 2021թ. հուլիսի 27-ի՝ «Արտակարգ դեպք Երևանում. տղամարդը ասում էր, որ փրկել է Թրամփին, ու երկնքից իրեն տեղեկություններ են փոխանցվել Հայաստանը փրկելու համար. ոստիկաններն ու բժիշկները նրան ձեռնաշղթայված տեղափոխեցին «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» հրապարակման կապակցությամբ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ նախագահ Մուշեղ Հովսեփյանի դիմումի վերաբերյալ

Ա. ՓԱՍՏԵՐ

2021թ. օգոստոսի 24-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ստացել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ նախագահ Մուշեղ Հովսեփյանի դիմումը Shamshyan.com լրատվական կայքի հուլիսի 27-ի՝ «Արտակարգ դեպք Երևանում. տղամարդը ասում էր, որ փրկել է Թրամփին, ու երկնքից իրեն տեղեկություններ են փոխանցվել Հայաստանը փրկելու համար. ոստիկաններն ու բժիշկները նրան ձեռնաշղթայված տեղափոխեցին «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» հրապարակման վերաբերյալ:

Հրապարակումը, որը բաղկացած է իրար լրացնող տեքստից, լուսանկարներից և տեսանյութից, պատմում է ենթադրաբար հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին ոստիկանների և ԱԻՆ-ի աշխատակիցների ուժերով «Ավան» հոգեկան առողջության կենտրոն տեղափոխելու մասին:

Ըստ դիմումատուի՝ «ռեպորտաժն ուղեկցվում է տղամարդու՝ ենթադրաբար առողջական վիճակով պայմանավորված կեղծ և իրականությանը չհամապատասխանող դատողություններով»։ Դիմումատուն համարում է, որ դրանով լրատվամիջոցը խախտել է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի մի շարք դրույթներ և ակնկալում է ստանալ Դիտորդ մարմնի կարծիքը վերոնշյալ հրապարակման վերաբերյալ։

2021թ. սեպտեմբերի 3-ին ԴՄ-ն դիմել է կայքին՝ տեղեկացնելով բողոքի մասին։

2021թ. սեպտեմբերի 6-ին ԴՄ-ն նախաձեռնեց դիմումի քննարկումն առցանց ձևաչափով։

Դիտորդ մարմինը, առաջնորդվելով իր աշխատակարգի 4.6 կետով, համարեց, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ նախագահ Մուշեղ Հովսեփյանը պատշաճ դիմող է, և դիմումն ընդունեց քննարկման։

Բ. ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք

Հոդված 3. Օրենքի հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **անձնական տվյալ՝** ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը.

2) **անձնական տվյալների մշակում՝** անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ.

3) **անձնական տվյալների փոխանցում երրորդ անձանց՝** անձնական տվյալները որոշակի կամ անորոշ

շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողություն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալները հրապարակելը, տեղեկատվական.

14) **հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ՝** անձի ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկություններ.

Հոդված 26. Անձնական տվյալները երրորդ անձանց փոխանցելը

1. Առանց անձնական տվյալների սուբյեկտի համաձայնության մշակողը կարող է անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց կամ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրել, եթե դա նախատեսված է օրենքով և ունի բավարար պաշտպանության մակարդակ:

2. Առանց անձնական տվյալների սուբյեկտի համաձայնության մշակողը կարող է հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ փոխանցել երրորդ անձանց կամ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրել, եթե՝

1) տվյալներ մշակողը հանդիսանում է օրենքով կամ վավերացված միջազգային պայմանագրով սահմանված հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակող, այդ տեղեկության փոխանցումը ուղղակիորեն նախատեսված է օրենքով և ունի բավարար պաշտպանության մակարդակ.

2) օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում հատուկ կատեգորիայի անձնական տվյալները կարող են փոխանցվել տվյալների սուբյեկտի կյանքի, առողջության կամ ազատության պաշտպանության համար:

II. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք

Հոդված 7. Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները

1. Արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը:

2. Արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման

մասին առանց անձին զգուշացնելու, և այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար և դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաև մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար:

III. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների Էթիկական սկզբունքների կանոնագիր

1.4. Հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից:

1.5. Վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա:

4.1. պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության և նամակագրության նկատմամբ: Բացառապես հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հարապարակումը,

4.6. առողջական լուրջ խնդիրներ ունեցող, ինքնասպանություն գործած կամ այդպիսի փորձ կատարած անձանց, ինչպես նաև ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ,

5.1. Խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով:

5.2. Որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և

անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:

6.1. Աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից:

IV. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգ

4.6. ԴՄ-ն կարող է ընդունել երրորդ անձանց դիմում-բողոքը, եթե այն ներկայացնում է տվյալ ոլորտում մասնագիտացած ՀԿ-ն, և եթե բողոքը վերաբերում է տվյալ ՀԿ-ի շահառուին առնչվող հրապարակումներին:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

համարելով, որ

- խմբագրական անկախությունն ու խմբագրական ինքնուրույն քաղաքականությունն արտահայտվելու ազատության տեսակետից կարևոր արժեքներ են, և յուրաքանչյուր խմբագրություն ինքն է որոշում իր լսարանի համար հետաքրքիր իրադարձություններն ու դրանք լուսաբանելու կամ չլուսաբանելու անհրաժեշտությունը,

այդուհանդերձ, ընդգծելով, որ

- բողոքում նշված իրադարձության նման լուսաբանումը հանրային շահերի պաշտպանության կամ հանրային հետաքրքրության տեսակետից անհրաժեշտություն չէր,

արձանագրում է.

- Տվյալ հրապարակման տեքստի վերջում տեղադրված ծանուցումը («Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով») հուշում է, որ հրապարակման հեղինակը ենթադրաբար առողջական խնդիրներ ունեցող անձին նույնականացնում է հանցագործի հետ, ինչն անընդունելի է: Եթե մարդը հիվանդություն կամ հոգեկան առողջության խնդիրներ ունի, անգամ ենթադրաբար նա չի կարող համարվել հանցագործ:

- Նյութում չկա կոնկրետացում՝ արդյո՞ք անձը վտանգ էր

ներկայացնում, արդյո՞ք մեկուսացումն անհրաժեշտություն էր, տվյալ անձն ունի՞, թե՞ չունի խնամող, գուցե ահազանգած հարևանն ուզում էր նրանից ազատվե՞լ: Այս հարցադրումների պատասխաններն անհրաժեշտ էին, որպեսզի հանրությունը հասկանար արարքի վտանգավորության աստիճանը և հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունը: Այսինքն՝ խախտված է ինֆորմացիայի ամբողջականության սկզբունքը:

- Նյութին կցված լուսանկարներում երևում է մարդու դեմքը, որով հնարավոր է նույնականացնել անձին: Դա անընդունելի է մարդու անձնական տվյալների պաշտպանության տեսակետից:

- Տեսանյութում (4:43-5:10 րոպեների ընթացքում) ոչ միայն երևում է տվյալ անձնավորության դեմքը, այլև լսվում է նրա ձայնը: Սրանք ևս անձի նույնականացմանը օժանդակող տեղեկություններ են:

- Հատկապես անընդունելի է, որ լրատվամիջոցը հեռարձակում է բժշկի խոսքերը (6:43 – 6:55 րոպեների ընթացքում), որով պնդվում է, թե մարդը հոգեկան առողջության խնդիրներ ունի և նոր է դուրս գրվել հոգեկան առողջության կենտրոնից: Էթիկական տեսակետից, ինչպես նաև անձնական կյանքի ու բժշկական գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունից ելնելով, խմբագրությունը պետք է զերծ մնար նման պնդումը ցուցադրելուց:

ԴՄ-ն կոչ է անում՝

- Մինչ լուսաբանումը քննարկել նման միջադեպերի հանրային հետաքրքրության աստիճանը:

- Եթե, այդուհանդերձ, որոշում է կայացվում լուսաբանել, հնարավորինս բացառել այնպիսի տեղեկությունների հրապարակումը, որոնք խախտում են մարդու անձնական կյանքի գաղտնիության սկզբունքը և հնարավորություն են տալիս նույնականացնել անձին:

- Կանխակալ վերաբերմունք չդրսևորել այս և նման իրավիճակում հայտնված անձանց հանդեպ՝ տալով ախտորոշումներ կամ նրանց վարքը նույնացնելով հանցագործության հետ:

Դիտորդ մարմինը սույն կարծիքին կից ներկայացնում է հավելված՝ ուղղված ՀՀ ուժային կառույցներին, առողջապահական հիմնարկներին, ԱԻ նախարարությանը:

Ընդունվել է 2021թ. սեպտեմբերի 6-ին,

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ, Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի տնօրեն

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արա ՇԻՐԻՆՅԱՆ, Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: